

Խորհրդանշական է, որ այստեղ է գտնվում Հայաստանի առաջին հանրապետության առաջին եռագոյն դրոշը:

Միաբանութեան թանգարանում ցուցադրուած են նաեւ համաշխարհային մշակութային արժէքներ: Այնտեղ է գտնուում եգիպտական մումիա՝ իր սարկոֆագով, որի վրայի նկարազարդումն իր պահպանուածութեան որակով աշխարհում լաւագոյններից մէկն է: Մումիան շուրջ 4,5 հազար տարեկան է: Կայ նաեւ եգիպտական սրբազան կատուի մումիա, որը պատկանում է Ք.ա. 2-րդ հազարամեակին:

Ներկայումս գրադարանում կայ մօտ 270.000 ցուցանմուշ, որոնցից 40.000-ը հայկական. դրանով իսկ այն հանդիսանում է Վիեննայի ամենամեծ գրադարաններից մէկը:

Այսօր վտանգուած է գիտութեան, կրթութեան ու բարձր մշակոյթի այս հրաշակերտ տաճարի շարունակականութեան հարցը, կառոյց, որը հայ եւ համամարդկային մշակոյթին պարգեւեց նուիրեալ գործիչների մի ամբողջ բանակ: Չկան ահռելի պատմամշակութային ժառանգութիւնը պահպանելու բաւարար պայմաններ: Վստահ եմ, որ միայն Հայոց պետութիւնը, օգտուելով իր սահմանադրական իրաւունքից եւ բարոյական ու ազգային պարտաւորութիւններից, կարող է յաւուր պատշաճի օգնել միաբանութեանը՝ լուծելու ծագած հիմ-

նահարցերը: Սփիւռքի նախարարութիւնը պատրաստ է իր բոլոր հնարաւորութիւններն օգտագործել եւ աջակցել, սատար կանգնել համամարդկային եւ ազգային բարձր արժէք եւ մեծ դերակատարութիւն ունեցող Միւթարեան միաբանութեանը, պահպանել ու պաշտպանել այն զօրաւոր մշակութային աշխարհը, որ երկու դարի ընթացքում, կեանք ու հոգի ներդնելով, ստեղծել են միւթարեան հայրերը:

Անշուշտ, շատերն են ուսումնասիրել Վիեննայի Միւթարեան միաբանութեան գործունէութիւնը, գրուել են աշխատութիւններ, կազմակերպուել են գիտաժողովներ, հրատարակուել են գրքեր, սակայն, կարծում եմ՝ այս գիտաժողովը 200-ամեայ հեռաւորութիւնից նոր լոյսի ներքոյ, նաեւ Հայրենիք-Սփիւռք գործակցութեան տեսանկիւնից է վերաարժեւորելու միաբանութեան բազմավաստակ գործունէութիւնը: Վստահ եմ, որ գիտաժողովը կը ներկայացնի եւ կ'օգնի բացայայտել միաբանութեան պահպանման հետ կապուած խնդիրները, կը փորձենք որոնել ու գտնել դրանց լուծման ուղիներն ու կառուցակարգերը:

Թոյլ տուէք եւս մէկ անգամ շնորհաւորել եւ գիտաժողովին մաղթել արգասաւոր ընթացք:

### ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ (Պատմական ակնարկ)

Հ. Պօղոս Գոճանեան

Յայտնի իրողութիւն է, որ հայ ժողովուրդի պատմութեան վերջին 300 տարիներուն Միւթարեան Միաբանութիւնը մեր ազգային մշակոյթի զարգացման մէջ անգնահատելի դեր կատարած է:

Միւթարեան Միաբանութիւնը միայն կրօնական հաստատութիւն չէ: Անոր հիմնական նպատակը եղած է եւ է՝ մեր ժողովուրդի հոգեւոր ու մտաւոր զարգացումը: Միւթար Սեբաստացի հիմնած է իր Միաբանութիւնը իր իսկ բառերով՝ «Ի հոգեւոր օգուտ՝ եւ ի լուսաւորութիւն ազգին մերոյ Հայկազնոյ»: Ինքը Միւթար, ինչպէս նաեւ իր հետեւորդները ծառայած են այդ նպատակին:

Այժմ, պատմական թուուցիկ ակնարկով մը պիտի փորձենք, որչափ կարելի է, տալ ուրուագիծ պատկեր մը միւթարեան միաբանութեան եւ յատկապէս Վիեննական ճիւղի մշակութային գործունէութեան:

15-րդ, 16-րդ եւ 17-րդ դարերը ծանօթ են որպէս մեր ազգի պատմութեան մութ էջերը: Պետականութենէ զրկուած եւ պատմական Հայաստանի սահմաններէն ներս ու դուրս ցիրուցան՝ հայ ժողովուրդը կ'ապրէր երկու օտար, իսլամական կայսրութիւններու մէջ: Ոսումնական կեանքը նոյնիսկ վանքերու մէջ, որ մեր մշակոյթի միակ վայրերն էին, գրեթէ մարած էր: Թանձր փոշին նստած էր գիրքերու վրայ, ինչպէս կը գրէ ժամանակակից պատմիչը՝ Առաքել Դաւրիժեցի:

Այդ մութ ժամանակաշրջանի վերջաւորութեան՝ 1676 թ. ծնաւ Միաբանութեանս հիմնադիրը՝ Միւթար Սեբաստացի կամ Միւթար Աբբահայր: Դպրոցներ չկա-

յին այդ ժամանակ Սեբաստիայի մէջ: Քահանայ մը սորվեցուց երեսային կարգալ ու գրել: Ուրիշ բան չունէր քահանան անոր տալու: Եւ այդ միակ ուսուցիչն էր, որ ունեցեր է Միւթարը իր կեանքին մէջ: 14 տարեկան պատանին ընդունուեցաւ Ս. Նշան վանքը: 17 տարեկանին սկսաւ թափառիլ վանքէ վանք, քաղաքէ քաղաք՝ գտնելու տեղ մը, ուր կարենար ուսում ստանալ: Ան ամէն տեղ յուսախաբուութիւն ապրեցաւ: Փորձեց երթալ Եւրոպա, բայց Կիպրոսի մէջ հիւանդութիւն մը ստիպեց զինք ետ վերադառնալ:

Միւթար տեսաւ նաեւ հայ վանքերու անկեալ վիճակը: Կրօնաւորական կեանքը շատերուն համար դարձեր էր աւելի արտաքին երեւոյթ, ծիսակատարութիւն. կը պակսէր հոգին: Նախանձ եւ հակառակութիւն կը խանգարէին վանական կեանքը: Միւթար այդ չարիքի արմատը տեսաւ վանականներու տգիտութեան կամ անբաւարար կրթութեան եւ ուսման հանդէպ անտարբերութեան մէջ: Այդ տխուր փորձառութենէն մտքին մէջ գաղափարը ծագեցաւ նոր վանք կամ միաբանութիւն մը հիմնելու՝ ազգը լուսաւորելու համար, կամ իր իսկ բառերով՝ «Ի հոգեւոր օգուտ եւ ի լուսաւորութիւն ազգին մերոյ Հայկազնոյ»:

Երկար ճամբորդութիւններէ եւ մեծ դժուարութիւններէ յետոյ վերջապէս Միւթար յաջողեցաւ հիմնել իր Միաբանութիւնը Պոլիս, 1701-ին, երբ տակաւին 25 տարեկան էր: Այդ ժամանակ Պոլսոյ մէջ սաստկացեր էին դաւանական վէճերն ու կռիւները լուսաւորչական եւ կաթողիկէ հայերու միջեւ, որուն հետեւանքով պաշտօնական բաժանում պիտի յառաջանար

Հայ եկեղեցւոյ մէջ: Մխիթար հակառակ էր այդ բաժանման. ան համոզուած էր, որ չկար հաւատքի իրական տարբերութիւն երկու համայնքներու մէջ. ինք անխտիր կը քարոզէր բոլոր Հայ եկեղեցիներու մէջ, կը քարոզէր սէր եւ միութիւն: Բայց անօգուտ. ան երկու կողմերէն ալ հալածուեցաւ: Զինք կը մեղադրէին որպէս հաւատափոխ եւ բախտախնդիր:

Մխիթարի նորահաստատ Միաբանութիւնը նախ փոխադրուեցաւ Յունաստանի Մոնէա թերակղզիի Մեթոն քաղաքը, որ այդ ժամանակ ենթակայ էր Վենետիկի Հանրապետութեան: Մեթոնի մէջ 12 տարի յաջող գործունէութենէ վերջ Մխիթարեան Հայրերը ստիպուեցան ամէն ինչ լքել եւ փախչիլ Վենետիկ, որովհետեւ թուրքերը գրաւեցին քաղաքը: Վենետիկի մէջ Մխիթար ստացաւ Ս. Ղազար լքուած կղզին եւ այնտեղ ոչնչիէն սկսելով կազմակերպեց իր միաբանութիւնը: Ինք այնտեղ ապրեալ եւ գործեց մինչեւ իր մահը՝ 1749:

Մխիթար Հանճարեղ եւ սուրբ մարգէր: Ան գարմանալի եւ բազմակողմանի գործունէութիւն ծաւալեց բազմազան մարգերու մէջ՝ գործնական-կազմակերպչական աշխատանքներ, կրթական գործունէութիւն, եկեղեցական-աստուածաբանական գրութիւններ, լեզուական աննախընթաց գործեր՝ հայերէն առաջին բացատրական բառարանը, գրաբարի եւ աշխարհաբարի քերականութիւններ, կրօնական բանաստեղծութիւն եւ երաժշտութիւն:

Մխիթարի յաջորդող Մելքոնեան արբաժոր ժամանակ՝ սահմանադրական հարցերու պատճառով՝ Մխիթարեան Միաբանութիւնը բաժնուեցաւ երկու մասի: Վենետիկէն Հեռացող միաբանները իրենց կենդրոնը հաստատեցին անկէ ոչ հեռու ծովեզերեայ Թրիեստ քաղաքի մէջ, որ այդ ժամանակ մաս կը կազմէր Աւստրիական կայսրութեան: Մարիա Թերեզիա կայսրուհին յատուկ արտօնագրով Մխիթարեան Հայրե-

րուն թոյլատրեց Հաստատուիլ Թրիեստ, ունենալ այնտեղ վանք եւ եկեղեցի, դպրոց եւ տպարան: Այդտեղ բացուեցաւ Մխիթարեան առաջին սեփական տպարանը (1776):

1805-ին Թրիեստ անցաւ Ֆրանսական տիրապետութեան տակ: Մխիթարեան Հայրերը մատնուեցան նիւթական տաղնապի եւ 1810-ի դեկտեմբերին ստիպուեցան ամէն ինչ լքել եւ փախչիլ կայսրութեան մայրաքաղաքը՝ Վիեննա: Փրանց Ա. կայսրը վերանորոգեց Մարիա Թերեզիայի տուած արտօնագիրը նաեւ Վիեննայի համար, եւ Մխիթարեան Հայրերը Հաստատուեցան այնտեղ, Քափուչիններու մէկ լքուած վանքը, որ յետոյ (1837-38) Հիմնովին քանդելով՝ նոյն տեղը բարձրացուցին հոյակապ նոր շէնքը: Այդպէս կազմուեցան երկու անկախ Մխիթարեան միաբանութիւններ, մէկը Վենետիկ, միւսը՝ Վիեննա:

Երկու Միաբանութիւններն ալ՝ ունենալով նոյն հիմնադիրն ու նոյն նպատակը՝ նոյն գաղափարականով նուիրուեցան իրենց հոգեւոր, կրթական եւ գրական-հայագիտական առաքելութեան:

Մխիթարեան Միաբանութեան բաժանումը չեղաւ չարիք, այլ մանաւանդ ունեցաւ իր դրական արդիւնքը: Բացի օգտակար մրցակցութիւնէն, գլխաւորաբար իտալական եւ գերմանական տարբեր մշակոյթներու ազդեցութիւնը հարստացուց միաբանութեանս գործունէութիւնը:

Վերջապէս 10 տարի առաջ, աւելի քան 200 տարուան բաժանումէ վերջ, երկու Միաբանութիւնները նորէն միացան՝ միացեալ ոյժերով շարունակելու իրենց ժառանգած առաքելութիւնը:

**ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ**

Մխիթարեան Միաբանութեան գրական գործունէութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ կէտերու մէջ.

**1) Գրաբար լեզուի վերանորոգում**

ԺԸ. դարուն հայերէն աշխարհաբարը դեռ չէր ձեւաւորուած եւ չէր կրնար գործածուիլ որպէս գրական լեզու. միակ գրական լեզուն գրաբարն էր: Բայց այդ գրաբարը դարերու ընթացքին նախ յունարէնի, յետոյ լատիններէնի ազդեցութեամբ եւ մանաւանդ գրողներու տգիտութեան պատճառով դարձեր էր բոլորովին խանգարուած, աղճատուած լեզու: Հարկ էր այն մաքրել եւ կանոնաւորել:

Արդէն Մխիթարը գրած էր գրաբարի նոր քերականութիւն մը եւ հայերէն առաջին ընդարձակ բառարանը: Իր յաջորդները Վենետիկ միշտ աւելի լաւ քերականութիւններ գրեցին եւ 1836-37 թուականին երեք Մխիթարեան Հայրերու միասնական աշխատանքով Վենետիկի մէջ լոյս տեսաւ հսկայական երկու հատորներով Հայկազեան նոր բառարանը:

Բայց լեզուի զտութեան այս գործին մէջ վերջնական քայլը առին Վիեննայի Մխիթարեան Հայրերը, որոնք քննական ոգիով եւ տքնաջան աշխատանքով յայտնաբերեցին դասական գրաբարը իր հարազատութեամբ եւ գեղեցկութեամբ. ատիկա է. դարու կամ ոսկեդարու Մեսրոպեան գրաբարն էր:

**2) Աշխարհաբար լեզուի գտում եւ ճոխացում**

Մխիթար Աբբահայրը գրած էր նաեւ աշխարհաբարի քերականութիւն, ինչպէս նաեւ աշխարհաբար լեզուով Քրիստոնէականի դասագիրք մը. իր յաջորդները ժամանակ մը անտեսեցին աշխարհաբարը, բայց ո՛չ առանց պատճառի:

1799-ին Վենետիկէն Հ. Ղուկաս Ինճիճեան սկսաւ Պոլսոյ մէջ հրատարակել առաջին աշխարհաբար թերթը «Տարեգրութիւնք»ը: 1843-ին լոյս տեսաւ Վենետիկի մէջ «Բազմալէզ» ամսագիրը եւ 1847-ին Վիեննա «Եւրոպա» Շաբաթաթերթը, եր-

կուքն ալ աշխարհաբարով: 1830-նական տարիներուն Մխիթարեանները հրատարակեցին նաեւ բնագիտական դասագրքեր աշխարհաբար լեզուով: Նշեալ գրութիւնները մեծապէս նպաստեցին աշխարհաբարի զարգացման: Իսկ 1860-նական թուականներուն, գրաբարի եւ աշխարհաբարի միջեւ մղուած պայքարի ընթացքին, Վիեննա լոյս տեսաւ Հ. Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն արդի աշխարհաբար լեզուի» հոյակապ աշխատութիւնը, որ ապահովեց աշխարհաբարի յաղթանակը:

**3) Ծիսական, խրատական, աստուածաբանական գրութիւններ**

Այս մարզի մէջ հրատարակուեցան փոքր ու մեծ բազմաթիւ նիւթեր:

**4) Հրատարակութիւն գրաբար հարուստ գրականութեան**

Այն մատչելի դարձնելու համար լայն հասարակութեան: Ասիկա մասնաւորաբար Վենետիկի Միաբանութեան արժանիքն է: Աւելի ուշ լոյս տեսան նաեւ նոյն գրութիւններէն քննական հրատարակութիւններ թէ՛ Վենետիկ, թէ՛ Վիեննա:

**5) Համաշխարհային դասական գրականութեան թարգմանութիւններ**

Թարգմանուեցան բազմաթիւ գործեր հին յունարէն, լատիններէն, իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն եւ լեհերէն լեզուներէ՝ գեղեցիկի ճաշակը մեր ազգին մէջ արթնցնելու համար:

**6) Մխիթարեան Միաբանութեան բանասիրական վաստակը**

Մխիթարեան Միաբանութեան գրական մեծագոյն պարծանքը անոր բանասիրական վաստակն է: Ան կ'ընդգրկէ հայագիտութեան բոլոր մարգերը՝ լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, հնագիտութիւն, եկեղեցական պատմութիւն, մատենագրութիւն, ձեռագրական ուսումնասիրութիւն, ճարտարապետութիւն, գիտութիւն եւ արուեստ:

Արդէն ժԸ. դարուն Վենետիկի մէջ լոյս տեսաւ Հ. Միքայէլ Չամչեանի եռահատոր կոթողային գործը՝ «Պատմութիւն Հայոց»ը: ԺԹ. դարուն հիացում կը պատճառեն Հ. Ղեկոնդ Ալիշանի բազմաթիւ ու մեծահատոր գրութիւնները Հայագիտութեան բոլոր մարզերուն մէջ:

Նշուած այդ գործերը սակայն գրուած են աւանդութեան հանդէպ դեռ միամիտ հաւատքով: Բայց 1840-նական թուականներուն Վիեննայի Մխիթարեաններու մօտ, գերմանական գիտական մթնոլորտի ազդեցութեամբ, արթնցաւ քննական ոգին, եւ Հ. Յովսէփ Գաթրճեան այդ ոգիով գրեց իր «Տիեզերական Պատմութիւն»ը եւ առանջին անգամ ըլլալով՝ ան ընդհանուր պատմութեան մէջ հիւսեց նաեւ Հայոց պատմութիւնը:

1887 թ. Վիեննա «Հանդէս Ամսօրեայ» թերթի հրատարակութեամբ սկիզբ առաւ Հայագիտական ուժեղ շարժում մը: Այդ թերթը շուտով վերածուեցաւ զուտ Հայագիտական ուսումնասիրութիւն - այդ ժամանակ միակը իր տեսակի մէջ Հայութեան մօտ - եւ դարձաւ Հայագիտութեան կենդրոն, որուն շուրջ հաւաքուեցան թէ՛ Հայ, թէ՛ օտար բազմաթիւ Հայագէտներ: Նաեւ «Բազմավէպ»ը, որ 1843 թ.էն սկսած կը հրատարակուէր, հետզհետէ զարգացաւ Հայագիտական ուղղութեամբ: Երկու թերթերն ալ, որոնք լոյս կը տեսնեն մինչեւ այսօր, շատ մեծ նպաստ բերած են Հայագիտութեան:

**7) Կրթական աշխատանք**

Մխիթարեան առաջին դպրոցը սկսած է 1746 թ. դեռ Մխիթարի կենդանութեան, Թրանսիլուանիայի Պաշպալով քաղաքը (այժմ Ռումանիա): Իսկ ժԹ. դարէն սկսած

Մխիթարեանները վարած են բազմաթիւ դպրոցներ հայաշատ շրջաններու մէջ, հայրենիքէն ներս ու դուրս: Շատ յայտնի անձնաւորութիւններ, որոնք կարեւոր դեր կատարած են վերջին 200 տարիներուն Հայ ժողովուրդի կեանքին մէջ, Մխիթարեան վարժարաններու աշակերտներ են:

**8) Մշակոյթի եւ արուեստի գանձերու խնամքով հաւաքում ու պահպանութիւն**

Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան վանքերը իրենց մատենադարաններով ու թանգարաններով սփիւռքի մէջ Հայ մշակոյթի մեծագոյն կենտրոններն են: Երկու մատենադարաններէն իւրաքանչիւրը ունի շուրջ 150,000 հատոր տպագիր մատեան՝ շատ մեծ մասը Հայերէն լեզուով, անկէ զատ շուրջ 4000 ձեռագիր Վենետիկի եւ 2,500 Վիեննայի մէջ:

Վիեննայի մատենադարանը կը պահպանէ Հայ մամուլի մեծագոյն հաւաքածոն ամբողջ աշխարհի վրայ, իսկ թանգարանը՝ Հայկական դրամներու մեծագոյն ժողովածոն, եւ անկէ զատ հարուստ ժողովածուներ նկարներու, սրբազան առարկաներու, Հայկական գորգերու, ազգային տարազներու, Հայկական յախճապակիի, արծաթի վրայ կատարուած աշխատանքներու եւն.:

Կ'ուզեմ խօսքս վերջացնել այս հաստատ յայտարարութեամբ: Եթէ Հայ ժողովուրդը անցնող մութ դարերուն իր կրած ազգային եւ մշակութային այլասերումէն յետոյ, 20-րդ դարու սկիզբը իր ազգային եւ մշակութային իսկական վերածնունդը ապրեցաւ, այդ շարժման նախաձեռնողը եւ մղիչ ոյժը անժխտելիօրէն Մխիթարեան միաբանութիւնն էր:

**ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՃԱՐԵՂ ՏԻՏԱՆԸ՝ ՀԱՅՐ ՅԱԿՈՎՐՈՍ ՎՐԴ. ՏԱՇԵԱՆ (1866-1933)**

**Հ. Մեսրոպ վրդ. Թոփալեան**

Վիեննայի Մխիթարեան դպրոցին ուսումնագիտական օժախն ու Հայկաբանական դարբնոցը կը սիրեմ յորջորջել «Արարատ», որուն «Միս» ու «Մասիս» կատարները կը կազմեն քսաներորդ դարուն՝ Հ. Յակովբոս Տաշեան (1866-1933) եւ Հ. Ներսէս Ակիւնեան (1883-1963)՝:

Հ. Տաշեանէն նախ քանի մը կենսագրական գիծեր: Ան ծնած է Կարին (Արծաթի գիւղ), 25 հոկտեմբեր 1866, 14 տարեկանին գացած է Վիեննա որպէս Մխիթարեան դպրեվանքի սան, 14 մայիս 1885 անդամակցած է Մխիթարեան միաբանութեան եւ 25 դեկտեմբեր 1889 ձեռնադրուած կուսակրօն քահանայ:

**Հ. Տաշեան քիչ ճամբորդած է:**

1893 այցելած է Թրիեստ եւ Վենետիկ, 1894 գացած է Պերլին արքունի մատենադարանի Հայ ձեռագիրները ուսումնասիրելու համար, 1898 մեկնած է Պոլիս եւ Իզմիր. նպատակն էր այցելել իր ծննդավայրը, բայց չէ յաջողած:

1909-1912 գտնուած է Պոլիս իբր Մխիթարեան վանատան մեծաւոր: Այս պաշտօնավարութեան ընթացքին ալ կատարած է գիտահետազոտական ուղեւորութիւններ Կարին եւ շրջակայքը մինչեւ Խոտորշուր,

որոնց նկարագրութիւնները կը գտնենք անոր ուսումնասիրութիւններուն մէջ:

Այնուհետեւ մինչեւ իր մահը (3 փետրուար 1933) ապրած է Վիեննա, ուր երկար տարիներ եղած է Միաբանութեան ընդհանուր վարչութեան անդամ:

Հ. Տաշեան արդարօրէն կը վայելէ բազմահմուտ գիտնականի համբաւ: Ան, սկսած իր ուսանողական տարիներէն, չգոհանալով դպրեվանքի մէջ ստացած ուսումնական կրթութեամբ՝ հետեւողական ինքնուսուցումով ու աշխատասիրութեամբ դարձաւ անգերազանցելի Հայրէնագէտը՝ հմուտ եւ գիտակ ոչ միայն գրաբարի եւ աշխարհաբարի, այլ նաեւ Հայ բազմաթիւ բարբառներու, ինչպէս կ'իմանանք ոչ միայն անոր այս կամ այն երկէն, այլ նաեւ անոր գիտական թղթակցութիւններէն Հայագրի կամ օտարազգի զանազան մասնագէտներու հետ:

Ինքնաշխատութեան արդիւնք եղան նաեւ բացի գերմաներէն, ֆրանսերէն, յունարէն, լատիներէն լեզուներէն, որ դպրեվանքի ուսումնական ծրագրի մաս կը կազմէին արդէն, իտալերէն, անգլերէն, ռուսերէն, արաբերէն, ասորերէն, եթովպերէն, թրքերէն, քրտերէն, պարսկերէն, լեզուները, որոնց ծանօթութեան շնորհիւ Հ. Տաշեան կրցաւ օգտագործել օտար սկզբնաղբիւրներ, բնագիրներ ու կատարել լեզուաբանական Համեմատութիւններ:

Բազմաթիւ լեզուներու գիտութիւնը դարձուցին Հ. Տաշեանը անմրցելի լեզուագէտն ու լեզուաբանը, որ կրնար թելադրանք եւ ուղղութիւն տալ իրեն դիմող գիտնականներուն: Այդպիսի դէպքերու

1 Հմմտ. Հ. Պետրոս Տէր Պօղոսեան, Դ Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեան, պատուակալ Դոկտոր Փիլիսոփայութեան 1883-1963,- ՀԱ. 78, Վիեննա, 1963, էջ 449-468, Հ. Վահան Ինգլիզեան, Հայր Ներսէս Ակիւնեան, Հայ բանասէրը,- ՀԱ. 68, Վիեննա, 1954, էջ 355-396, եւ Հ. Վահան Ինգլիզեան, Հայր Ներսէս Ակիւնեան վարդապետի աշխատասիրութիւնները,- ՀԱ. 68, Վիեննա, 1954, էջ 396-414: